ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 59 66 59, քարտուղարություն հեռ.՝ 59 61 25

№ 24/2447 « 11 » 11 2014 թ.

Ձեր

Հայաստանի Հանրապետության արտաքին
գործերի նախարար պարոն
Է.Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

«Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն և ի կատարումն ՀՀ վարչապետի 27.10.2014թ. թիվ 02/12.10/17849-14 հանձնարարականի՝ ուղարկվում է «Տրանսպորտային միջոցի անձնագրի» (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու այլ տիպի տեխնիկայի անձնագրի միասնական ձևերի ներդրման էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» 2014 թվականի օգոստոսի 15-ի համաձայնագրին միանալու վերաբերյալ արձանագրությունը ստորագրելու նպատակահարմարության մասին տեղեկանքը:

Առդիր՝ « 1 » թերթ:

ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ **Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆ**

կատարող՝ Իրավաբանական վարչություն
Ա. Զոհրաբյան հեռ. 59-64-16

Մուտք Հանրապետության արտաքին գործերի նախարարություն
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք Մ 10732
«____» 20 թ.
12 NOV 2014

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության՝ «Տրանսպորտային միջոցի անձնագրի» (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու այլ տիպի տեխնիկայի անձնագրի միասնական ձևերի ներդրման էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» 2014 թվականի օգոստոսի 15-ի համաձայնագրին միանալու մասին արձանագրությունը» ստորագրման նպատակահարմարության մասին

«Եվրասիական տնտեսական միության» մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին ՀՀ-ի միանալու մասին» պայմանագրի 1-ին հոդվածը նախատեսում է, որ եթե մինչև նշված պայմանագրի ուժի մեջ մտնելը Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ստորագրվի կամ ուժի մեջ մտնի Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի գործելու հետ կապված հարցերով միջազգային պայմանագիր, ապա Հայաստանը պարտավորվում է առանձին արձանագրությամբ միանալ այդ պայմանագրին:

2014 թվականի օգոստոսի 15-ին Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի Դաշնության միջև ստորագրվել է «Տրանսպորտային միջոցի անձնագրի» (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու այլ տիպի տեխնիկայի անձնագրի միասնական ձևերի ներդրման էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» համաձայնգիրը (այսուհետ՝ Համաձայնագիր), որով կարգավորվում է անձնագրերի միասնական ձևի կիրառումը տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակների), ինքնագնաց մեքենաների և որպես տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակներ), ինքնագնաց մեքենաներ թողարկված այլ տեսակի տեխնիկայի համար, որոնք արտադրվել և ենթակա են գրանցման Կողմ-պետությունների տարածքում, ինչպես նաև դրանց համար էլեկտրոնային անձնագրերի կիրառումը:

Հայաստանի Հանրապետության՝ «Տրանսպորտային միջոցի անձնագրի» (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու այլ տիպի տեխնիկայի անձնագրի միասնական ձևերի ներդրման էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» 2014 թվականի օգոստոսի 15-ի համաձայնագրին միանալու մասին *արձանագրության ստորագրմամբ* Հայաստանը կմիանա համաձայնագրին, ինչը հնարավորություն կտա տրանսպորտային միջոցների ոլորտում առավել արդյունավետ համագործակցել Մաքսային միության անդամ երկրների հետ: